նելու: Թեթեւ նախաճաշիկից յետոյ Ասլանը վեր առեց իր հետ զանազան տեսակ բժշկական դեղեր ու գործիքներ, մի մասն էլ ինձ տոեց, եւ մենք դուրս եկանք տնից: Նա ասաց, որ մի քանի հիւանդների այցելութիւն պիտի գործէ: Քաղաքում դեղատուն չլինելու համար, նա ումն որ բժշկում էր, դեղերն էլ ինքն էր տալիս, աղքատներին՝ ձրի, իսկ հարուստներից փող էր ստանում:

— Դու գիտե՞ս քո դերը, Ֆարհատ, — ասաց նա, երբ դուրս եկանք փողոցը:

— Ի՞նչ դեր, — հարցրի ես, բոլորովին մոռացած լինելով այն պատերները, որ, Վան քաղաքը մտնելուց առաջ, ճանապարհին տոել էր ինձ:

— Դու եւրոպացի բժշկի ճանապարհորդութեան առաջնորդն ես: Հասկացա՞ր:

— Հասկացայ, — մեքենայաբար պատասխանեցի ես:

Ի՞նչ առաջնորդ կարող էի լինել ես, երբ ոչ երկրի հետ ծանօթ էի եւ ոչ լեզուներ գիտէի: Ես, իսկապէս, նրա խուլ ստորն էի, որ անգիտակցաբար գնում էի նրա ետեւից:

Ասլանը սիրում էր ոտքով ման գալ, որքան եւ հեռու լինէր ճանապարհը: Նա հագած ունէր մինչեւ ծնկները երկայն կօշիկներ, գլխին դրել էր մոխրագոյն, լայնեզր, փափուկ գլխարկ, իսկ աչքերը զինուած էին մուգ-ծխագոյն ակնոցներով, որոնք բոլորովին անտեսանելի էին կացուցանում նրա թափանցիկ, խորախորհուրդ աչքերը, որոնք ակնոցների ամենեւին պէտք չունէին: Թեւքի տակ կրում էր իր դեղորայքի պայուսակը, ձեռքին բռնած ունէր մի հաստ փայտ, որ աւելի մահակ էր, քան թէ գաւազան:

Արեւը դեռ նոր էր բարձրացել: Ամառնային առաւօտը մի առանձին զովութիւն էր ստացել Այգեստանի լայն փողոցների մէջ, որոնք աջ եւ ձախ կողմից զարդարուած էին ահագին ուռենիների եւ բարդենիների շարքերով: Այդ դարեւոր ծառերով հովանաւորուած էին փոքրիկ առուակները, որոնք հոսում էին փողոցների երկու կողմերից եւս եւ ջուր էին մատակարարում թէ այգիներին եւ թէ բնակիչների տները շրջապատող պարտէզներին: Նայելով այդ ծառազարդ բնակարաններին, անծանօթ մարդու գլխում իսկոյն ծագում է այդ միտքը, թէ որքա՜ն ուրախ եւ խաղաղ ապրում է այստեղ քաղաքացին:

— Հայը ապրել գիտէ, — ասում էր Ասլանը, — ստրկութեան լծի տակ անգամ նա պահպանում է մի տեսակ բարեկեցութիւն, եւ դրա մէջն է նրա կենդանականութիւնը, որ դարերի ընթացքում թէեւ տրորւում է ճնշման ներքոյ, բայց դարձեալ չէ մեռնում: